Կ. 3

ՀՐԱՏ. ՌՈՒՍԶՈՒԲԻ ՀՆԶ. ՄԱՍՆԱՃԻՊԻ

323.1
Ա-82

ԹԻՒՐՔԻՈՅ ԸՆԴՈՒՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐԸ

ՊՐԱԿ Ա.

Խմբագրեց

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ

323.1
Ա-82

1908

Տպարան Գ. Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ

11

309
39

15 JAN 2014
26 SEP 2006

ԹՈՒՐՔԻՈՅ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐԸ

Հայ Ժողովրդին

Հասարակական ամեն մի բարդ խնդիր, ամեն մի խոշոր երևոյթ ա՛յն ժամանակ միայն կատանայ նպատակայարմար ուղղութիւն և դրական լուծումն, երբայդ խնդրով շահագրգռուած հասարակութիւնները իմաստոյ կը ծանօթանան խնդրի ծագմանն ու էութեանը։ Երբ բազմակողմանի ուսումնասիրութեան, քննադատութեան կենթարկեն նրանք այդ երևոյթը։ Երբ, վերջապէս, հասարակութեան ամենալայն խաւերի մէջ բացորոշ հասկացողութիւն կը կազմուի այդ առթիւ։

Այլապէս, ընդհանուր բնաւորութիւն կրող հարցերի մակերևութային ըմբռնումով և մի քանի անհատների կամքով նրանց այս կամ այն ուղղութիւնը տալով, մէջտեղ ուժողը կըլինի նոյն ա՛յն հասարակութիւնը կամ ժողովրդները, որոնց ճակատագրին հետ սերտ կապ ունի քննելի խնդիրը։

Մ՚իայն ստրուկ ժողովուրդն է, որ թոյլ կըտայ առանձին անհատների՝ վճռել իր բաղդը, որովհետև ստրուկները լիովին զուրկ են սեփական կամքից, ըստ որում և նրանց մէջ

9930

տիրապետում է բացարձակ կրաւորականութիւնը։ Այնտեղ՝ մարդիկ ոչնչով չեն տարբերւում անշունչ իրերից կամ անբան անասուններից, որոնց „տէրը" իւր կամքի ուղած ձևով էլ վարւում է նրանց հետ, քշելով ուր և կամենայ, առանց ենթակաների հաւաքական կամքն ստանալու։

Բայց որովհետև սարկութեան դարն անցել է արդէն և երկրագնդի վրայ ապրող համարեա բոլոր ժողովրդները այսօր եկել են այն գիտակցութեան, որ մարդը ոչ իր է և ոչ էլ անասուն և որ ոչ ոք իրեն իրաւունք պիտի չը համարէ բռնանալ իր նմանների կամքին վրայ, ուստի և ոչ ոք չպիտի յանդգնի վճռել այս կամ այն հասարակական լուրջ խնդիրը, եթէ նա արտօնուած չէ նոյն այդ հասարակութիւնից՝ առնելու այդպիսի մի քայլ և եթէ նա բռնապետ չէ։

Մանաւանդ յեղափոխուող ժողովրդների մէջ, որոնք ընտրել են յեղափոխական արնոտ ասպարէզը՝ լոկ իրենց անբռնաբարելի մարդկային ու քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար՝ ընդդէմ ամեն կարգի անիրաւութեանց ու ստնձգութիւնների, — մանաւանդ այդպիսի մի ժողովրդի մէջ, ասումենք, չ՝պէտք է հասարակական բարդ խնդիրները լուծումն ստանան առանց ժողովրդի հաւանութեան, առանց վերջնիս հաւաքական կամքն առած լինելու։

Սա այնպիսի մի ճշմարտութիւն է, որ

չենք կարծում թէ նրա դէմ վիճող որևէ մէկը դուրս գայ։

Եւ ով դէմ կրգնայ այդ տարբերական պահանջին, նա կրդառնայ ժողովրդի թշնամին, կամ առնւազն կըմեղանչէ քաղաքացիական իրաւունքների դէմ։

Արդ, թուրքիոյ ընդդիմադիր տարբերի միութեան կամ հաւասարաշխ գործակցութեան գաղափարը, որ սերտ կերպով կապւածէ Հայ, Մակեդոնացի, Յաճիկ, Յոյն, Արաբ, Դրուզ, Հրեայ... ժողովրդների կեանքին հետ և նրա այս կամ այն եղանակով վճռիլը պիտի ունենայ իւր խորը ու պատմական ազդեցութիւնը այդ ազգերի հասարակական-քաղաքական կեանքին վրայ,-ոչ սապաքէն անհրաժեշտ է ամեն բանից առաջ ի նկատի առնել այդ ազգերի տրամադրութիւնները, բանալ նրանց առջև խնդիրը իւր մանրամասնութիւններով, ունենալ գաղափարի և մտքերի ամենալայն փոխանակութիւններ, ստանալ ժողովրդային զանգւածների վճռական հաւանութիւնը և ըստ այնմ վարուիլ։

Հպէտք է մոռանալ նաև այն, որ յիշեալ ազգերից շատերը այսօր իրենց յետև թողնումեն մի բանի տասնեակ տարիների յեղափոխական կեանք՝ իւր բազմաթիւ ֆիզիքական, նիւթական և բարոյական զոհողութիւններով, պատմական-քաղաքական դրատիցիաներով, որոնք և կազմում են այդ ազգերի միտն ու արիւնը, մասնաւոր ու միջազգային իրաւունքներով, որոնք

երկար տարիների ընթացքում կլանել են նրանց ամբողջ եռանդը և որոնց վրայ սևեռած է եղել նրանց լաւագոյն զաւակների հայեացքը, ձգտումներով, որոնք այնքան սուրբ են իրենց համար, որքան և նրանց կամքը՝ անբռնաբարելի։

Ընդհատած, սակայն, այդ բոլորին՝ անցեալ 1907 թուի վերջերը, դեկտեմբեր ամսում, փարիզի մէջ դումարուեց մի „միջակուսակցական՝ կամ „միջազգային կոնգրէ՝՝, առանց վերոյիշեալ կարևոր պայմաններն ինկատի առնելու և առանց նոյնիսկ հրաւիրուող կուսակցութեանց ընդհանուր կամքն իմանալու։

Թէև եղան թերթեր («Դրօշակ», «Հայրենիք» „Վտակ՝՝, „Ռազմիկ՝՝ և նրանց թարգման, „Pro armenia՝՝), որոնք հազար ու մի դրական ածականներով որակեցին այդ „պատկառելի՝՝ կոնգրէն, կամենալով հայ հասարակութիւնը ձգել հայրենադրուժ մոլորութեան մէջ, բայց փասդը, որքան էլ և խեղաթիւրուի նա անմաքուր դրչակներով, կմնայ հրապարակի վրայ մերկապարանոց։

Միևնոյն արարածները, որ ապիկար խելագարութիւնն ունեցան Հայ Յեղափոխական Կուսակցութեանց „Համերաշխութիւնը հացի խնդիր» հրատարակելու, մի բոպէ իսկ չ՝վարանեցան հայա-թուրք կատակերգութիւնը աշխարհռչակ մի իմաստութիւն, թուրքահայ ի-

բականութեան մէջ ամենափառաւոր միակ ցոյց տալու, մոռնալով այլևս որ դեռ մօտիկ անցեալում իրենք էին որ իրենց պաշտօնական ու կիսապաշտօնական օրգաններում Դօն-Ֆիշոտեան նիզակնէր էին ճօճում այսօրւայ իրենց ,,զինակիցների'' դէմ։

Թուրքիոյ ընդգիմադիր տարրերի միութեան կամ համերաշխութեան հարցը աւելի քան լուրջ եւրարդ մի խնդիր է, որ դեռևս ո՛չ միայն այդ տարրերի համախմբման մասին արտայայտած չեն ինչպէս հարկն է, ո՛չ միայն մինչև այսօր այդ գաղափարների իրականացման համար ակնյայտ երաշխիքներ չեն եղել, կեանքի մէջ, - այլ և դեռ բոլորովին հակառակն է ցոյց տուել կեանքը։

Դրան ապացոյց այն իրողութիւնը թէ-կուզ, որ կօնգրէին հրաւիրած 15 - ի չափ խմբակցութիւններից ու կուսակցութիւններից կօնգրէին մասնակցեցան երեքը միայն։

Դրան ապացոյց՝ դժգոհ տարրերի ծրագիրները։

Դրան ապացոյց՝ նրանց պաշտօնական օրգանները։

Դրան ապացոյց՝ Յեղ. կուսակցութեանց ամբողջ պատմութիւնը։

Դրան ապացոյց՝ կօնգրէից յետոյ արտայայտուող հրապարակական բանաւոր ու գրաւոր բողոքները, դժգոհութիւնները։

Դրան ապացոյց՝ հէնց ինքը կոնդրէն իւր տուած որոշումներով և միով բանիւ իւր խղճուկ ելքով։ Հապճեպով ու անշրջահայեացու թեամբ գումարուած մի կոնդրէ դրանից բացի ուրիշ արդիւնք ունենալ չէր կարող։

Սակայն այս տեղ մեզ հետաքրքրողն այնքան կոնդրէի դրական կամ բացասական արդասիքը չէ, որքան խնդիրը՝ ըստ էութեան։ Կոնդրէին անդրադառնալու առիթը կունենանք դեռ։

Հայ Յեղափոխական Հնչակեան կուսակցութիւնն էլ, լինելով մին թուրքիոյ ընդդիմադիր տարրերից, իւր քսան ու մէկ տարուան գոյութեան ընթացքում բազմիցս զբաղուել է այդ խնդրով, վարել է լուրջ բանակցութիւններ միւս ընդդիմադիր տարրերից ոմանց հետ, այդ հարցին նուիրել է բազմաթիւ էջեր իւր պաշտօնական ու կիսապաշտօնական օրգաններում, դրել է իւր հայեացքները և մասամբ էլ լսել միւսների թեր և դէմ կարծիքները, և վերջ ի վերջոյ եկել ու հանդել բացասական ելքի, - փաստերը միութեան դէմ էին խօսել։

Եւ որպէսզի Հայ ժողովուրդը կրկին կարողանայ բնորոշել իւր դիրքը հանդէպ միւս ընդդիմադիր տարերի, ինչպէս նաև զգուշացնելու համար նրան մի շարք դիտումնաւոր խեղաթիւրումներից, որոնցմով վերջերս շատերն աշխատում են անուանարկել հնչակեան կուսացու-

թիւնը, մեղադրել նրան մանաւանդ՝ այսպէս կոչուած՝ „երիտասարդ թուրքերի" հանդէպ, հարկ համարեց ներկայ և սրա նման մի շարք գրքոյկներով ներկայացնել Հայ Ժողովրդին Հնչակեան կուսակցութեան հայեացքները։

Այդ գրքոյկների մէջ երբէք տեղ պիտի չ'գտնեն անհատական կարծիքները, այլ հարազատութեամբ պիտի վերատպուին այն պաշտօնական գրութիւնները, որոնք հրատարակուել են Հնչակեան կուսակցութեան պաշտօնական օրգանում, սկսած անցեալ դարի ինսնական թուականներից մինչև մեր օրերը։

Ու վստահ ենք, որ այդ պատմական տեղեկութիւնները վերջ պիտի դնեն սղուենների վայնասունին, միաժամանակ պարզելով հասարակութեան առաջ մանրամասնութիւնները այն խնդրի, որ Հայ ժողովրդի ընդհանուր— ազգային կեանքին է վերաբերում,

Մենք կրկնարենք մեր քաղաքացիական պարտքը և այնուհետև հասարակութեան կրնայ դիտակցել իւր իրաւունքները ու հանրային կամքի ուժով վճռել իր ճակատագիրը։

Հասարակութիւնն է, որ կրմատակարարէ Յեղափոխական կուսակցութեանց մտաւոր, ֆիզիքական և նիւթական ուժերը, ուստի և նոյն հասարակութիւնն էլ իւր գիտակից վերաբերմունքով դէպի հանրային գործերը՝ պիտի գայ ասելու իւր կուսակցութիւններին Ազգի վճ-

ական խօսքը՝ որի մէջ պիտի ամփոփի Հայութեան պատմական-քաղաքական Զգաւումը։

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ

1908 Մարտ 2/15
Ռուսչուք

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՏԱՊՕՆԻԶՄ[1])

Ցաւոտի է, որ Հայ յեղափոխական մարմիններից միայն Հին Հնչակեանները եղան, որ չմասնակցեցան Երիտասարդ Թիւրքիայի կամ, ինչպէս ընդունուած է անուանել նրանց քաղաքական աշխարհում, Օսմանցի ազատամիտների վերջերս Փարիզում գումարած կոնգրէսին[2]), հակառակ կրկնակի հրաւէրներին, որ սացան նրանք կոնգրէսը կազմակերպողներից եւ որոնք անպատասխան մնացին նրանց կողմից։

Այս իրողութիւնը Հայ յեղափոխական պատմութեան մէջ եթէ հանդիսանար որպէս լոկ մի պատահականութիւն, առանց որեւէ կապ կամ առնչութիւն ունենալու յեղափոխական գիտակից մտածման հետ՝ մենք, ի հարկէ, ամենեւին էլ չէինք վերադառնայ նրան եւ կը թողնէինք որ նա կորաւէր լռութեան, անյայտութեան մէջ։ Սակայն իրականութիւնը այդ չէ։

Այն գիրքը, որ ունեցաւ Հնչակեան Կուսակցու-

---

[1]) Ներկայ յօդուածը կարտապէնք 1904 թուի № 2 «Հնչակ»—ից։

[2]) Զպէտք է չփոթել 1907 թուի դէկտեմբերին, նոյն քաղաքում, գումարուած ժէօն Թրքօ—Դրօշակեան կոնգրէսին հետ, ներկայ յօդուածում խօսումէ այն կոնգրէսի մասին, որ գումարուեց 1902 թուին եւ որին մասնակցեցան ժէօն Թիւրքերը եւ հայերից Դաշնակցականները եւ Վերակազմեալները։ Այդ կոնգրէսի մասին դեռ առիթ կունենանք խօսելու։

թիւնը Օսմանցիների կօնդրէսի հանդէպ, չառաջացաւ որեւէ անհոգ, անտարբեր, անդիտակից պատահականութիւնից, այլ նա եղաւ, ընդհակառակը, բոլորովին որոշ, գիտակից մտածման արդիւնք, նախապէս մտածուած եւ հարցի բազմակողմանի ուսումնասիրութեան վերայ կեցած որոշման մի հետեւանք։ Արդարեւ, այն միջոցին, երբ Փարիզում տեղի էին ունենում կօնդրէսի նիստերը, լուծելու համար այն հարցը, թէ չէր՞ կարելի արդեօք մի դրօշի տակ համախմբել եւ մի մարմնի վերածել Օսմանեան բռնապետութեան տակ հեծող բոլոր ժողովրդների յեղափոխական ներկայացուցիչ տարրերը, Հնչակեան կուսակցութիւնը ճիշդ այդ միջոցին, զբաղու�էր իմիջի այլոց եւ լուծելու այդ միեւնոյն հարցը եւ գալիս էր այն եզրակացութեան, որ ո՛եւէ համերաշխ գործունէութիւն չէ կարող կենալ հայ յեղափոխութեան եւ երիտասարդ Թուրքիայի միջեւ[3]։

Ահա թէ ինչո՞ւ Հնչակեան կուսակցութիւնը հարկ չտեսաւ մասնակցելու Երիտասարդ Թուրքիայի Կօնդրէսին։

Փաստը՝ որ այդ Կօնդրէսը կատարելապէս վիժեց իւր նպատակների ու ձգտումների մէջ, փաստը, որ այդ

---

[3]) Ընթերցողի լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Հնչակեան Կուսակցութեան Ֆիշեալ Պատգամաւորական ժողովը, ինչպէս եւ այնուհետեւ գումարուած ընդհանուր Պատգամաւորական ժողովները եւ կուսակցութեան պաշտօնական օրգանները՝ սկզբունքով ոչ միայն դէմ չեն եղել Թուրքիոյ ընդհանուր տարրերի համերաշխութեանը, այլեւ ամենից աւելի Հնչակեաններն են պահանջել այդ համերաշխութիւը (Մակեդոնացիների, Արաբների, Յոյների, հետ) այդ կէտը նախատեսած է նոյնիսկ մեր Ծրագրում։ Հնչակեա՛նները դէմ էին եւ են Երիտասարդ թիւրքերի հետ միացած գործելու մտքին։

կոնգրէսին մասնակցող Հայ Յեղափոխականները, որպէս մի մարմին, an bloc, կարճ ժամանակից յետոյ հարկադրը. եւեցան թողնել ու հեռանալ կոնգրէսից. — եկաւ անհերքելի կերպով ապացուցանելու որ հնչակեան կուսակցութեան բռնած դիրքը՝ վերաբերմամբ Երիտասարդ Թուրքերին՝ կատարելապէս համապատասխան էր հայ յեղափոխական ոգուն, նրա ձգտումներին եւ իրերի դրութեան պահանջման։

Հազիւ կոնգրէսի սրահի դռնից ներս մտած՝ հայ յեղափոխականները՝ բնազդաբար, զգումեն որ գտնուում են մարդկանց առաջ, որոնք ոչ աւելի ոչ պակաս, քան Համիտը ինքը, իրենց թշնամիներն են, որոնց ներկայութիւնից հարկաւոր է որքան կարելի է շուտ խուսափել, ազատելու համար հաղար ու մի խորամանկութիւններով, արեւելեան բարքերին յատուկ շողոքորթութեամբ չաղախուած կեղծ ու պատիր յարգանքների տակ ծածկուած թագուն միտումներով լարուած թակարդներից, որոնց մէջ ընկնիլը ուղակի աղետալի կարող էր լինել։

Ահա բոլոր իրողութիւնը մեզ համար, ակնյայտնի կերպով դուրս է ցատկում եւ աչք ծակելու չափ առաջ է ցցուում բոլոր այն տգեղ, այն զզուելի տեսա, բաններից, որոնք պարզուել են այդ կոնգրէսին մասնակցող մեր հայ յեղափոխականների առաջ։

Կոնգրէսը վիժեց, ուրեմն։

Երիտասարդ Թուրքիայի հետ համերաշխ գործելու գաղափարը ջուրն ընկաւ։

Այդպիսի մի համերաշխութեան կարելիութեանմասին յայտնուած մտքերը- կարծիքները, կատարուած արգումենտացիաները, տածուած յոյսերը, բոլորն էլ յայտնուեցան ուտոպիկական եւ առաջացած պատրանքից, իլլիւզիայից։

Զեռքի մէջ մնացած իրողութիւնը, չոչափելի

փաստը այն է, որ այդպիսի համերաշխութիւն այդ երկու մարմինների մէջ, ընդդէմ տաճկական արդի ըէ-ժիմին, բացարձակապէս անհնարին է։

Եւ մենք ուրախ ենք, որ Հնչակեան Կուսակցութիւնը, á priori, իւր կողմից կօնգրէսին մասնակցող հայ յեղափոխականները a posteriori իրենց կողմից, եկան եւ յանգեցան այդ եւ միեւնոյն եզրակացութեան։

Եւ ուրիշ տեսակ էլ չէր կարելի։ Որպէսզի համերաշխութիւն կենայ երկու մարմինների մէջ, անհրաժէշտ է որ այդ երկու մարմինները ներկայացնեն իրենց հիմնական նպատակների մէջ միեւնոյն ձգտումները [4]։ Առանց այդ հիմնական անհրաժեշտութեան, անկարելի է որ նրանք գնան միմեանց հետ համերաշխ, ներդաշնակ, մզելիք կուին մէջ, առանց միմիանց խանգարելու, առանց միմեանց դաւաճանելու։ Իսկ այդպիսի մի հիմնական նոյնութիւն մենք ոչ մի հատ չենք տեսնում Օսմանեան լիբերալների եւ Հայ յեղափոխականների ձգտումների միջեւ, որպէսզի կարելի լինէր մտածել մի բոլէ մի համերաշխ գործունէութիւն, մի դաշնակցութիւն ստեղծելու մասին այդ երկու մարմինների մէջ։

Ճիշտ է, եւ առարկումն սովորաբար, որ Օսմանցի ազատամիտները նոյնպէս գժգոհներ են՝ ինչպէս հայերը, ինչպէս բոլոր օսմանեան ընտանեութեան լուծը կրող հպատակ ազգերը, ուր նրանք էլ նոյնպէս ուզումեն տապալել արդի կամայական ըէժիմը, որ

---

[4]) Նոյն իսկ այդ միտքն էր արտայայտում, փարիզի վերջին կօնգրէսից ընդամենը մի քանի օր առաջ, „Ռազմիկը" Հայ յեղափոխական կուսակցութեանց համերաշխութեան մասին դրելիս, բայց այդ իսկ „Ռազմիկը՝ խմբագրողը մասնակցեցաւ կօնգրէսին եւ... իր ազդարարութեամբը լզեց քիչ առաջ սիրախառնուքով թքածը։ Երանի՝ թէ սա վերջինը լինէր...

Նրանց բոլոր յեղափոխական ոյժերը ուրիշ կէտի ուղղած չեն, բայց եթէ ամեն չարիքների պատճառ եւ պատասխանատու Սուլթան Համիտի վրայ, սակայն դժգոհ լինելը բաւական չէ, որպէսզի այդ երկու մարմինների մէջ համերաշխութիւն գոյանայ։ Այստեղ վճռական եւ հատու նշանակութիւն ունեցողը հասարակական ձգտումներն են, հասարակական նպատակներն են, որոնք պէտք է որ միակերպ լինին երկու մարմինների համար էլ։ Ուրիշ խօսքով, ուղղութիւնն է, որ կարելի կամ անկարելի կը դարձնէ համերաշխ գործակցութիւն երկու հասարակական մարմինների մէջ։ Ինդրի վերայ այս տեսակէտից նայելով, խոր, գիտական վերլուծման ենթարկելով երիտասարդ Թիւրքիայի ու հայ յեղափոխականների ձգտումները, նրանց վերջնական նպատակները, անմիջապէս կարելի է տեսնել այն անդին, մեծ, ոչնչով չ'լեցուող վիհը՝ որ բացուում է նրանց միջեւ, այն անդին պատնէշը, որ բարձրանում է երկուսի միջեւ։ Ոչ մի կամուրջ չկայ, որ կարելի լինի դնել այդ վիհի, այդ լայն բացուածքի վրայ · ո՛չ մի սանդուղք չէ կարելի բարձրացնել անցնելու համար այդ պատնէշը։ Երկու մարմինները մնում են միմեանցից հեռու, շատ հեռու։

Նրանք միմեանց չեն տեսնում. նրանք միմեանցից մնում են բոլորովին ծածկուած, այն, ինչ որ տեսնում է, այդ միայն երեւոյթն է եւ այդ է որ մեզ խաբում է եւ մատնում իլլիւզիաների։

Ի՞նչ են այդ երկու հասարակական մարմինների ձգտումները։

Պարզ է թէ ո՛ւր կամ ի՛նչ բանի են ձգտում երիտասարդ Թիւրքերը։ Նրանց ձգտումը նրանց երազը ուրիշ բան չէ եթէ ոչ իրագործել Մահմատի ժամանակից մնացած ողորմելի Սահմանադրութիւնը, առանց դիպչելու սակայն բացարձակ միապետի անպատասխանատու

հանգամանքին, կարծելով թէ այդ հակասական դրութեամբ կարող կըլինին թիւրքիայի վարչական սիստեմը ազատել անսանձ կամայականութիւնից, իրականացնել ընդհանուր բարենորոգումներ երկրի ամէն կողմերում եւ դրանով գոհացում տուած լինել բոլոր դժգոհներին, բոլոր ընդվզողներին։

Մենք առ այժմ խնդրի եւ քննութեան առարկայ չենք ուզում դարձնել այն միջոցները, որոնցմով նրանք ուզումեն հասնիլ այդ նպատակին. այդ դեռ կարեւոր չէ։ Եթէ մենք տեսնենք որ նպատակի եւ ձգտումների վրայ (որոնք իսկապէս եւ ամենից առաջ իրաւունք են տալիս որեւէ քաղաքական մարմին կազմելու, ուրոյն կազմակերպութիւն ունենալու) համաձայնութիւնը, համերաշխութիւնը անկարելի է՝ այն ժամանակ շատ քիչ բան կրնայ ասելու, գուցէ բոլորովին էլ աւելորդ լինի ասել, նրանց գործածած միջոցների վրայ, որ դառնումէ երկրորդական հարց։

Երիտասարդ Թիւրքերը ուզումեն առաջացնել, խաղաղ միջոցներով, էվոլիւցիայի ճանապարհով, [5]) ինչպէս սիրում են նրանք ասել, մի զուտ ներքին յեղափոխութիւն բոլոր ֆունկցիաների, բոլոր կարգերի ու կանոնների մէջ։ Բայց այդ անելիս նրանք եւ ոչ մի րոպէ մտքով իսկ չեն անցնում զրկիլ պետութեան

---

[5]) Թէեւ ներկայումս երիտասարդ Թիւրքերը էվոլիւցիայի փոխարեն, իբրեւ, ռէվոլիւցիայի ճանապարհն ընտրելու խօստումն են տալիս իրենց դիւրահաւան դաշնակիցներին, բայց նրանց հիմնական ձգտումները, նրանց հաւատոյ հանգանակը մնումէ նոյնը, ինչ որ ճշմարտիւ նկարագրումէ վերեւում։ Մակերեսութային փոփոխութիւնը է. Թ.-երի արտաքին կեղեւի մէջ է միայն։ այդ են ասում նրանց օրգանները, կօնդրէից յետոյ, բացորոշ կերպով։

եւ ո՛չ մի կառրից եւ ոչ մի մասնիկից, դիպչել կամ թոյլ տալ դպչիլ նրա ամբողջութեանը, որի պահպանումը նրանց համար միեւնոյն հաւատոյ հանդանակն է, ինչ որ է իրա, սուլթանի եւ բոլոր Հին Թուրքերի համար։ Այդ կէտում նրանք յայտնուումեն նոյնքան եւ աւելի թթու պատրիոտներ, որքան չեն գուցէ Սուլթանը ինքը եւ Հին Թիւրքերը։ Նրանց յեղափոխական ձգտումը, ոգին, հետեւաբար, զուտ ներքին է։ Նրանք ուզումեն բարեփոխել Թիւրքիան, վերակենդանացնել, երիտասարդացնել նրան ինքն իր վրայ, առանց դիպչելու, ինչպէս ասացինք, պետութեան սահմաններին։ Այնպէս որ երբ կարդը դայ պաշտպանելու այդ պետութիւնը որեւէ արտաքին ոտնձգութեան կամ ներքին ընդվզման՝ ապստամբութեան դէմ, որ կարող է սպառնալ լուծելու այդ նուիրական դաւանանքի կարգ անցած ամբողջութիւնը, ցտելու պետական օրգանիզմը մի խօսքով բաժնելու, անդամատելու նրան՝ այդ պարագային, առումենք, Երիտասարդ Թիւրքերը պատրաստ են անմիջապէս, միանգամից, մոռանալ իրենց բոլոր տարբերութիւնները, որով նրանք որոշումեն իրենց ազգակից հին Թիւրքերից եւ սուլթանից եւ միանալով նրանց հետ, որպէս միմարմին, պաշտպանեն իրենց Վաթանը ներքին կամ արտաքին թշնամիների դէմ։[6])

---

[6]) Իմ մի քանի հրապարակային ժողովներում, Պուլկարիոյ մէջ, Դաշնակցական ընդիմախօսներս, որոնց թւում եւ հակասութիւնների չտեսարան Պ. Ռուբէն Զարդարեան, տքնումէին հաւատացնել, թէ ժէօն Թիւրքերն այժմ շատ փոխուել են եւ ձեռք են քաշել իրենց նախորդների թունդ նացիոնալիզմից եւ պատրիոտիզմից, բայց այդ պարոնները չեն ուզում մի բոպէ աչքից անցկացնել դէթ „Մէշվէրէթի" վերջին հա-

Երիտասարդ Թիւրքերն ասումեն.—յեղափոխենք երկիրը, այո, բայց նախ եւ առաջ պահպանենք նրա ամբողջութիւնը։

Մենք ոչինչ չունինք ասելու եւ ի՞նչ կարողենք ասել։ Չէ կարելի պահանջել, որ միանալով պետութեան թշնամիներին՝ անդամատեն իրենց վաթանը

Բայց հէնց այստեղից էլ սկսումէ, այսինքն հէնց հիմքից, արմատից, սկսումէ կազմելի այն անգին պատառուածքը, այն անանցանելի անդունդը, որ անկարելի է դարձնում որեւէ համերաշխ գործակցութիւն Երիտասարդ Թիւրքերի եւ հայ յեղափոխական ո՛րեւէ մարմնի, ո՛րեւէ կուսակցութեան մէջ։ Տրված լինելով այս վերջինների արամագծապէս հակառակ ձգտումները որոնք էականապէս ազգային եւ էականապէս անջատական (séparatiste) են, անտարօնիզմը չահերի, եղե՛լ է անտեսական, եղե՛լ է քաղաքական թէ ընկերային այնպէ՛ս հինական, այնպէ՛ս խոր է որ այդ երկու մարմինները արտաքին խարուսիկ երեւոյթների տակ, յայտնումեն ոչ աւելի ոչ պակաս—թշնամիներ. հէնց որ գտնումեն միմեանց ներկայութեան՝ գործնական հողի վրա։

Մի շատ խոշոր եւ կոպիտ սխալ է որ տարածումէ(եթէ միայն չլինին այնպիսիներ, որոնք հայկական յեղափոխական ձգտումներուն այլ ուղղութիւն տան[7]քան այն,

---

մարները, ուր ժէօն Թիւրքերի պարագլուխները բացարձակապէս սպառնումեն Հայկական որեւէ արմատական շարժում տեղնուտեղը խեղդել, միացած խալիֆի օգտուների հետ։ Կոնդր. ըէվոլիւցիայի այդ սրատաց ազդարարութիւնն էլ անկարող եղաւ դաշնակցականներին մի քիչ խելքի բերելու։

[7])Այդ յօդուածը գրած ժամանակ, եւ նոյնիսկ մինչեւ 1907 թ-ի սկիզբը, ոչ ոքի մտքից անգամ չէր անցնի թէ տարուան եղռնակներին հետ իւր զոյնը փոխող

որը մենք տալիս ենք. եւ որ կարծումենք թէ ճիշտ եւ ճիշդ համապատասխան է հայկական սրտի խղճերի, հայ ժողովրդի հառաչանքին ու իտէալին.) ասում ենք մի շատ խոշոր սխալ է որ տարածւած է հայ յեղափոխականներից շատերի մօտ եւ որի համեմատ իբր հայ յեղափոխականները ուզումեն տապալել տաճկական պետութեան մեջտիրող ներկայ բէժիմը եւ նրան փոխարինել նոր, եւրոպական քաղաքակիրթ ազգերի մէջ ընդունւած բարձր կուլտուրային բէժիմով։

Ոչ, այդպիսի միտսիա չունի հայ յեղափոխականը։ Հայ յեղափոխականի միտսիան ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ թոթափել այն տարկական լուծը, որի տակ հեծումէ, ոքնւումէ, ճնշւումէ, չարչարւումէ հայ ժողովուրդը տարի ներից հետ. խորտակել այն ամուր շղթաները, որոնցով կապւածեն նրա ոտները, եւ վերջապէս ազատել, բռնի ուժով, Հայրենիքը Օսմանեան քաղաքական իշխանութիւնից եւ կանգնել, ստեղծել մի նոր Երիտասարդ Հայաստան, սեփական կառավարութեամբ, սեփական օրէնքներով, սեփական կարգերով ու կանոններով։

Ահա թէ ինչպէս ենք հասկանում մենք յեղափոխական

գաշնակցութիւնը մի օր պիտի *եան ընկերկի ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ գաղափարից, ինչպէս որ գրանց 4-րդ Ընդհանուր ժողովը իր կազմին արժան ասպէտականութեամբ յայտարարեց՝ «սեպարատիստական ոչ մի ձգտումն»... թէեւ գրանից յետոյ էլ, մինչեւ այսօր գաշնակցական շարքերը կարծումեն, թէ երեկի եւ այսօրւայ մէջ «ոչ մի խզումն, վաղեմի ձգտումների»... իսկ չէֆէրն ու չէֆիկները գերեզմանային լռութամբ են անցնում այդ փափուկ խնդրի վրայից, գիտնալով թէ ինչ պատմական աքացի կսպասէ իրենց կրծքին... եթէ վարագոյրը բարձրացւի եւ „իրանց տղերքը" դէմի ընկնին։

չարժումը, նրա ձգտումն ու ոգին, նրա նպատակը։

Պարզ է ուրեմն, եւ այդ բնականօրէն հետեւումէ մեր բոլոր վերեւ ասածներից, որ մեր՝ այսինքն Հայ յեղափոխականներիս եւ Երիտասարդ Թիւրքերի մէջ ո՛չ մի համերաշխ գործունէութիւն, ո՛չ մի տեսակ դաշնակցութիւն չէ կարող գոյութիւն ունենալ—այդպիսի բան անիմաստ է ուղղակի, անհասկանալի է,—երբ մեր ձգտումները գնում են, հէնց հիմքից սկսած, միմեանցից բոլորովին հակառակ ուղղութեամբ։

Մենք ե՛նք ու կմնանք իրերի այս վիճակին մէջ քաղաքականապէս միմեանց թշնամիներ, որոնց մէջ բացւածէ մի խիստ անողորմ կռիւ, որ գոյութեան կռիւն է։

Եւ նրանք, Երիտասարդ Թիւրքեր, շատ լաւ են հասկացել թէ ո՞ւր են տանում մեզ մեր ձգտումները. շատ լաւ են զգացել թէ ինչ անհաշտելի անտագոնիզմ է տիրում մեր եւ իրենց միջեւ, եւ օգտուելով միամիտ կոկէտտրիներից, որոնք արել են եւ արում են տակաւին հայ յեղափոխականների կողմից օսմանցի լիբերալներին, նրանց կոնդրէսը կազմակերպողները, նրանց ջոջերը, տաճկական խորամանկ տիպլոմատների այդ ապագայ խորամանկ կանգիդանները, կոնգրէսի հրաւիրեցին հայ յեղափոխականներին, որպէսզի յանուն Օսմանեան ընդհանուր ժողովրդների միութեան, յանուն ընդհանուր բարենորոգումների՝ խեղդէին, ոչնչացնէին իսպառ անհետ անէին քաղաքական աշխարհից հայկական դատը։

Այն՝ ինչ չկարողացաւ անել Համիտը իւր հարիւր հազարաւոր զոհերով, նրանք ուզեցին խաղաղ միջոցներով, լռիկ-մնջիկ, կաբինետային հաշիւներով, յաջողացնել, մէկ քարով երկու թռչուն զարնել, բայց զերեւ ելան։ Հայ յեղափոխականները, ոմանք աւելի

չուտ, ոմանք աւելի ուշ, նշմարեցին լարած ծուղակը եւ խոյս տուին վտանգից[8]։

Գաղափարային այս հիմնական տարբերութիւնը թէեւ ինքնին բաւական է ապացուցանելու համար որ շատերի կողմից համակրութիւն ստացած եւ ցանկացած համերաշխ գործունէութիւնը Երիտասարդ Թիւրքերի եւ հայ յեղափոխականների մէջ բացարձակ անկարելիութիւն է, այնու ամենայնիւ մենք աւելորդ չենք համարում նաեւ մի քանի խօսք ասել եւ այլ՝ ոչ նուազ կարեւոր գործնական նշանակութիւն ունեցող կէտերի վրայ, որոնք առանձին-առանձին վերցրած, բաւական են մի անգամից կարճ կարելու ո՛րեւէ կամէութիւն, ո՛րեւէ ցանկութիւն՝ համագործակցութեան մէջ մտնելու այդ մարմնի հետ։

Մենք մինչեւ հիմա խօսելով Երիտասարդ Թիւրքերի մասին, ընդունեցինք նրանց որպէս կազմակերպած մարմին։

Իրականութիւնը սակայն այդ չէ։ Իսկապէս Երիտասարդ Թրքական մարմին, կազմակերպած կուսակցութիւն չկայ։ Դրանք բոլորը անհատներ են, որոնք ցանուցիր, փոքրիկ խմբերով ցրած են այլ եւ այլ կողմերում, առանց ունենալու որոշ կարգ ուկա-

---

[8]) Ով կարո՞ղ էր երեւակայել, որ „խորամանկ" Երիտասարդ Թիւրքերի լարած „ծուղակը" պիտի լարէր Հայկական Դատին դէմ նոյն Հայ յեղափոխական Դաշնակցականների ձեռքով։ Զարմանալի են աշխարհի բաները, մարդիկ փոխանակ օրրատօրէ փորձառութիւն ձեռք բերելով նենգաւոր թշնամիներից պաշտպանուելու մասին մտածելու, վեր են կենում մեր „յեղափոխական" ազգակիցները իրենք են ապտնում իրենց Դատը եւ կամովին կուլ գնում տարբերներից իվեր ճանչուած թշնամու որկորը։ Ինքնասպանութիւն չէ՞ր միթէ կատարածը . . .

նոններով հաստատած ներքին սերտ միութիւն, մի կազմակերպութիւն։ Նրանց մէջ եղած կապը քաղաքական, հասարակական լինելուց աւելի, արեւելքին յատուկ ընտանութիւնէ։

Չկայ Երիտասարդ Թրքական կուսակցութիւն, պարտիա, որ իւր ճիւղաւորութիւններով թափանցած լինի տաճիկ ժողովրդի խաւերի մէջ։ Այդ երկու դոյութիւնները՝ Երիտասարդ Թիւրքիա եւ Տաճիկ ժողովուրդ միմեանց բոլորովին անծանօթ աշխարհներ են։ Խմբուած զլխաւորապէս փաստիշահի մայրաքաղաքում եւ նրա գահի շուրջը, ընդունակ են աւելի դաւադրական գործողութիւններով, խորամանկ մեքենայութիւններով դինասթիա տապալելու, քան թէ երկար եւ համբերատար աշխատութեամբ ժողովուրդ պատրաստելու եւ նրա ձեռքով հիմնական ժողովրդային յեղափոխութիւն արաջ բերելու։ Համերաշխութիւն հաստատել մի մարմնի հետ, որ մարմին չէ, դաշնակցիլ խմբերի հետ որոնք մեծաւ մասամբ բաղկացած են Սուլթանի անտուրաժից փախած, զզուելի կամ օրրայից դուրս պրծած ամէն տեսակ չանտաժիստներից, խարերաներից, բարոյականից—հասարակական մարմինների այդ ամենանտրաժելի էլէմէնտը—միանգամայն զուրկ տարրերից, մենք զանուումենք ոչ միայն անկարելի, այլ եւ վտանգաւոր։ Իսկապէս, մեր երեւակայութեան մէջ չէ կարող մի բոպէ նկարելի մի պատկեր, ներկայացնող հայ յեղափոխականներին եւ երիտասարդ Թիւրքերին շարած կողք կողքի, սերտ շարքերով, համերաշխ, միասան միասիրտ գրոհ տալիս տաճկական բանակների վրայ ազատելու համար . . . մեր Հայրենիքը, մեր սիրելի Հայաստանը։ Այդպիսի պատկեր ու տօպիկական է, ծիծաղելի է մինչեւ իսկ։ Ուստի եւ մենք միանգամ ընդմիշտ թաղումենք խոր գետնի տակ ամէն միտք, ամէն ջանք, համերաշխութեան եւ վտանգաւոր կամ-

պրոմիսների մանելու մի մարմնի հետ, որ դեռ գոյութիւն չունի եւ գոյութիւն իսկ ունենայ՝ սկզբունքով անկարելի է որ այդպիսի համերաշխութիւն կարելի լինի ունենալ նրա հետ։

Գիտենք, գոյութեան կռիւը, որ մղում է տասնեակ տարիներից իվեր Հայ ժողովուրդը՝ դժւար է, ծանր է։ Գիտենք որ մեզանից անհամեմատ աւելի զօրաւոր թշնամուն յաղթելու համար հարկաւոր է ամեն կարելի եւ անկարելի միջոցներից օգուտ, աջակցութիւն փնտռել, դաշինք կռել, սակայն եւ հարկաւոր է որ այդ միջոցները, այդ աջակցութիւնները իրական լինին, որ նրանք գրական օգուտ տան եւ երաշխաւորւած լինին որ յուսախաբութեան, պատրանքի չեն ենթարկի ժողովրդին եւ, որ աւելի է, չեն դաւաճանի նոյն իսկ այն ձգտումներին, այն իդէալներին, որոնք խորը թաղուած են հայ ժողովրդի հոգու ծալքերում եւ որոնց իրականացման մէջ միայն կարող է նա գտնել իւր անդորրութիւնը, իւր բոլոր ազգային հասարակական ցանկութիւնների կատարուիլը[9]։

Մենք թողնենք ուրեմն որ գնան այդ Երիտասարդ թիւրքերը, իրենց բազդին, եթէ կարող են, ստեղծելու իրենց երազած Երիտասարդ թիւրքիան։ Մենք, հայ յեղափոխականներս, ոչինչ չունինք դրա դէմ։ Բայց մենք էլ կըզնանք, մեր սեփական ուժերով՝ մեր սեփական միջոցներով եւ ապահով, երաշխաւորւած ու նպատակայարմար դաշնակցութիւններով, ստեղծելու մեր Երիտասարդ ՀԱՅԱՍՏԱՆԸ։

---

[9]) Հնչակեան Կուսակցութեան պաշտպանած Ազատ Հայաստանի գաղափարը վերջերս մի քանի դաշնակցական նորելուկ աշխարհաքաղաքացիների կողմից նկատւում է որպէս ընկերվարականութեան հոգոյն հակառակ։ Արդէն հրապարակային ժողովներում ես աւել եմ դրանց

պատասխանը, բայց կրկին կրկնեցնեմ, որ այդ գաղափարին լիովին համամիտ են այսօրուայ ամենանշանաւոր ընկերվարականները, որոնց հայեացքները Ազատ Հայաստանի մասին պիտի դնենք ներկայ աշխատութեան յետագայ թերթերին մէջ։ Այստեղ կը գտնեմ միայն յայտնի ընկերվարական Քարլ Կաուցքի հայեացքը Հայկական Հարցի մասին ճիշտ այնպէս, ինչպէս որ նա տպուած է գաշնակցական Ե. Թ.—ի մի հրատարակութեան մէջ։ —Եւրոպայի հայ ուսանողութեան ուղղած մի նամակում Կարլ Կաուցկի այսպէս է ձեւակերպում իր վերաբերմունքը դէպի հայկական հարցը։

«« Ես բոլոր սրտով հայկական դատի համակրող ու պաշտպան եմ եւ հայոց դաս ասելով ես հասկանում ոչ միայն լոկ նրանց պաշտպանութիւնը թիւրական ու իրական կոտորածների դէմ այլ եւ վերականգնումը նրանց ազգային անկախութեան։ »»։

Այս. այսպէս է հասկանում Կաուցկին «« Հայոց Դատը »», համոզուած որ դրանով չիմեղանչիլ իւր քաղաքական դաւանանքի դէմ, իսկ մեր՝ երէկ մէկ այսօր երկու չակերտաւոր սոցիալիստ Դաշնակցականները, որ ընկերվարական Հնչակեաններին բանադրելու համար բերաններին վրայ գոյացած փրփուրը դեռ չէ անհետացել, այսօր նոյն այդ ոգորմելիները սրբապղծութիւն են համարում „Հայ Ազգային Անկախութիւն" բառերն իսկ արտասանելը ...

Գոնէ իրենց երեկուայ գրածները այսօր աչքէ անցնելու դժուարութիւնը կրէին, այն ժամանակ դուցէ մինչեւ ականջները կարմրելու հարկին մէջ գտնուէին։

ՀՄԱՑԵԱԿ ԱՐԱՄԵԱՆՑ